ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«13» 10 2021 թ.

№ 23/07-3809

ք. Երևան, Տերյան փող., 44, Հեռ.՝ (+374 11) 518 401
Էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«Ալեքսանդր-Մ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությանը
/ք. Երևան, Մաշտոցի 54ա/

ԾԱՆՈՒՑՈՒՄ

/պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ/

Երևանի քաղաքապետարանի և «Ալեքսանդր-Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի փետրվարի 25-ին կնքվել է հ.ԵՔ-ԳՀԾՁԲ-21/73-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիր /այսուհետ՝ նաև Պայմանագիր/, որի 1.1 կետի համաձայն՝ պատվիրատուն ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ալեքսանդր-Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ընդհանրապես չեն մատուցվել Պայմանագրով նախատեսված ծառայությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 կետով, միակողմանի լուծում է «Ալեքսանդր-Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2021 թվականի փետրվարի 25-ին կնքված հ.ԵՔ-ԳՀԾՁԲ-21/73-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիր:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Մարտիրոսյան
☎ 011-518-419 E-Mail: kentronirav@mail.ru